

371.4  
12-91

1 MAR 2010

Հ 12 ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱ-  
ՑԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ՝ № 12

Պրոլետարներ բոլոր երկրների, ժիացէք!

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՅԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ԴՊՐՈՑԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Գինն Է՝ 2 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ  
ՄՈԽԿԻԱ—1918

№ 12 ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱ-  
ՑԻԿ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

№ 12

370  
2000-ԿԱ

371-4  
Հ-91 Վ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱ-  
ՑԻԿ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ



1004  
15223

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՃԵԱՏԱՆՔԻՑԻՆ  
ԴՊՐՈՑԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱԾԻ  
ՄՈԽԿԻԱ - 1918

24 JUL 2013

ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻՎ ԽՈՐՀԾ-  
ԴԱՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆ-  
ՔԱՑԻՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

I. Միասնական Աշխատանքալին Դպրոցի ընդհանուր կանոն-  
ները

Յ օ դ. առաջին. Ժողովրդական Լուսաւորու-  
թեան ներքոյ գտնող Խուսաստանի Սոցիալիստական  
Ֆերատակիվ հանրապետութեան բոլոր դպրոցներին,  
բարձրագոյն դպրոցների բացառութեամբ, «Միասնա-  
կան Աշխատանքալին Դպրոց» անունն է դրւում:

Ծանօթութիւն առաջին. Առանձին  
դպրոցները դպրոցի տեղի, համարի և աստիճանի  
ցուցմոնքով, համառօտակի Խորհրդակին են կոչ-  
ւում. օր՝ Պետրովդրագի Նարվեան շրջանի առա-  
ջին աստիճանի երրորդ խորհրդային դպրոց:

Ծանօթութիւն երկրորդ. Դպրոցների  
բաժանումն ըստ սկսնական, բարձր սկսնական,  
դպրոցների, գիմնազիոնների, ուսական դպրոց-  
ների, արհեստաւորական, տեխնիկական, վաճառա-  
կանական դպրոցների և ստորին ու միջնակարգ  
դպրոցների այլ տեսակների՝ վերանում է:

Ծանօթութիւն երրորդ. 1918 թ. հոկ-  
տեմբերի մէկից բոլոր փարչութիւններին ենթար-  
կող դպրոցական հիմնարկութիւններն անցնում  
են ժողովրդական Լուսաւորութեան Կոմիսարի-  
ատին: («Собр. узак. и расп. Раб. и Кр.  
Прав.» № 30, ст. 507.)

Մ Ո Ս Կ Ի Ա

Տպարան Եղբ. Կ. և Ռ. Մ՛ԻՒՄԴԵԱՆՆԵՐԻ

1918

Յօդ. երկրորդ. Միասնական դպրոցը երկու աստիճանի է բաժանվում՝ առաջինը 8-ից մինչև 13 տարեկան երեխաների համար (5 տարւայ դասընթաց) և երկրորդը՝ 13-ից մինչև 17 տարեկանների համար (4 տարւայ դասընթաց).

Մանօթութիւն առաջին. Միասնական դպրոցին միացնւում է մանկապարակ՝ 6-ից մինչև 8 տարեկան երեխաների համար:

Մանօթութիւն երկրորդ. Դպրոցական ինքնավարութեան օրդանները կարող են ըլացնել մի տարով տարիքների նորմը՝ Ժողովրդական կրթութեան նահանգային բաժանմունքի հասաւատմամբ:

Մանօթութիւն երրորդ. Որոշւած նորմակց դուրս սովորողների դպրոցում մնալը, այլև նորմալ տարիքներից անցնող երեխաների ընդունելութիւնը, թուլատրուում է Դպրոցական Խորհրդի որոշմամբ:

Յօդւած երրորդ. Առաջին և երկրորդ աստիճանի ուսուցումը ժրի է:

Յօդւած չորրորդ. Դպրոցական տարիքի երեխաների համար առաջին և երկրորդ աստիճանի բոլոր երեխաների համար ուսուցումը պարտադիր է:

Մանօթութիւն. Այս բանը գործնականութեան իրավորմելու համար Ժողովրդական կրթութեան բաժանմունքները պէտք է անմիջապէս ձեռնարկեն մշակելու դպրոցական ցանցի յատակագիծը, դրի առնեն դպրոցական հասակի բոլոր երեխաներին 6-ից մինչև 17 տարեկանը, այլև կազմեն դպրոցների շենքի ու կահաւորման, անժնական

կազմի պահպանութեան, երեխաների սննդի, հօշկելնի, հագուստի և դասապիտոյքների նախահաշիւ։ Պարտադիր ուսումն անմիջապէս մտցրւում է ամենուրեք, որտեղ դպրոցների բանակը բաւականութիւն է տալիս դպրոցական հասակ ունեցող ամբողջ ազգաբնակութեանն և որտեղ կան կրթութեան հանրամատչելիութեան նախապայմաններ։ Այն անզրագէտ երեխաների համար, որոնք իրանց տարիքի շնորհիւ հանրատիպ գպրոցներն ընդունել չեն կարող, պէտք է կամ յատուկ դբադմունքներ կազմակերպւեն Միասնական Դպրոցին կից, կամ յատուկ արտադպրոցական զբաղմունքներ։

Յօդւած հինգերորդ. Առաջին և երկրորդ աստիճանների դպրոցներում տղաների և աղջիկների խառն ուսուցումն է մտցրւում („Собрание узакон. Р. и К. П.“ № 38, ст. 499).

Յօդւած վեցերորդ. Որևէ կրօնական դաւանանք դասաւանդել դպրոցի պատերի մէջ և դաւանանքի մէս կատարել դպրոցում թոյլ չի տրւում: («Собр. узакон. Р. и К. П.» № 18, ст. 263).

Յօդւած եօթերորդ. Դասաւատուները կարգերի բաժանելն արգելում է. դպրոցական բոլոր աշխատառները վարձատրւում են ուսուցչական աշխատավարձի նորմալի մասին Փող. Կոմիսսարների Խորհրդի հրատարակած դեկրետի առաջին կարգի աղիւսակի (ставки) համեմատ: (Собр. узаконен. и распор. Р. и К. П.» № 17, ст. 552).

Ծանօթութիւն առաջին Աւստրիական աշխատանքը դասագնով չէ փարձարւում, այլ՝ ամսագնով:

Ծանօթութիւն երկրորդ. Դպրոցական աշխատաւորներից որևէ պաշտօնէի աշխատանքը սահմանւում նորմայից դուրս փարձարելը չի թողարկում:

Յօդւած ութերորդ. Բոլոր դպրոցական աշխատաւորները, այսինքն, դաստուները, դպրոցի բժիշկները և ֆիզիկական աշխատանքի ինստրուկտորները՝ ընտրւում են 27-ն փետրարի 1918 թ. բոլոր մանկավարժական և փարչական-մանկավարժական պաշտօնների ընտրելիութեան մասին եղած որոշման և Փողովրդական Լուսաւորութեան Կոմիսարիատի ինստրուկցիաների համաձայն:

Ծանօթութիւն առաջին. Դպրոցական աշխատաւորների փոխանորդներն աշխատում են դպրոյցում Փողովրդական Կրթութեան Բաժանմունքների թոյլուութեամբ և իրանց պարտականութիւնների կատարման ժամանակ օգտուում են դպրոցական աշխատաւորների բոլոր իրաւունքներով:

Ծանօթութիւն երկրորդ. Այն դեպքում, եթե դպրոցի անտեսական կարիքները դրաբանական կոլեկտիվի ուժերով հնարաւոր չէ բաւարարել, թոյլ է արևում փարձով տեխնիկական ծառայողներ հրաւիրել, որոնք դպրոցական կրթական գործին չեն ծանակցում, բայց կարող են անտեսական խնդիրների ըննութեան հրաւիրել:

Ծանօթութիւն երրորդ. Դպրոցական աշխատաւորների մասնակցութիւնն ուրիշ դպրոց-

ների աշխատանքներին՝ թոյլ է արևում Փողովրդական Կրթութեան աեղական համապատասխան Բաժանմունքների կարգադրութեամբ:

Յօդւած իններորդ. Փողովրդական Լուսաւորութեան Կոմիսարիատին և Փողովրդական Կրթութեան Բաժանմունքներին կից ինստրուկտորների պաշտօն է հիմնւում: Ինստրուկտորների վրայ պարագանութիւն է ընկնում՝ պարբերաբար այցելել դպրոցները Փողովրդական Կրթութեան համապատասխան Բաժանմունքների հետ կենդանի կապ պահպանելու և դաստանուներին իրենց դպրոցական աշխատանքի մէջ օգնութիւն ցոյց տալու համար:

Յօդւած տասներորդ. Խրաքանչիւր դպրոցական աշխատաւորի վրայ 25 սովորողից աւել չպիտի ընկնի. այսպիսով դպրոցական աշխատաւորների ընդհանուր բանակն խրաքանչիւր դպրոցում պէտք է որոշել՝ հիմքը ընդունելով այդ նորման:

Ծանօթութիւն. Ցոյց տաւած նորմերից կարելի է շեղւել Փողովրդական Կրթութեան Բաժանմունքների որոշման համաձայն:

Յօդւած տասնեմէկերորդ. Ներկայ կանոնագրութիւնն (յօդ. 1—12) ոյժ ունի նաև մասնաւոր նախածեռնութեամբ հիմնւող դպրոցների համար: Վերջիններիս կարող է պետական օժանդակութիւն ցոյց տրւել՝ նրանց արժեքը Փողովրդական կրթութեան Տեղական Բաժանմունքներից ընդունելու պայմանով:

Ա. Դպրոցական աշխատանքի հիմնական սկզբունքները

**Յօդւած տասներկուերորդ.** Դպրոցական կեանքի հիմքն արտադրական աշխատանքն է կազմելու, բայց ոչ որպէս երեխաներին խնամելու վրայ եղած ծախսերը ծածկելու միջոց և ոչ միայն որպէս դասաւանդութեան եղանակ, այլ հենց որպէս հասարակականօրէն անհրաժեշտ արտադրական աշխատանք։ Նա պէտք է սերտօրէն, օրդանապէս կապւած լինի շրջապատի ամբողջ կեանքը գիտութեան միջոցով լուսարանող ուսուցման հետ։ Շարունակ բարդանալով և ենելով երեխաների կեանքը շրջապատող անմիջական պայմանների սահմաններից, արտադրական աշխատանքը պէտք է ժանօթացնի երեխաներին արտադրութեան ամենաբարձրագույն ծերին՝ մինչ ամենաբարձր ծերը։

**Մանօթութիւն առաջին.** Աշխատանքային սկզբունքը մանկավարժական զօրեղ միջոց կդառնոց այն դէպում, եթէ պարոցում աշխատանքն առեղծագործական հաճոյթի աղբիւր դառնայ, ազատուի սովորողի անձնաւորութեան վրայ գործ զրուող րոնութիւնից և այս բոլորի հետի միասին՝ սրածառագր և սոցիալորէն կազմակերպւած լինի։ Այս միջին իմաստով զպրոցը դպրոցական կոմմունա է, որ իւր աշխատանքային պրոցեսներով սերկեանքի հետ։

**Մանօթութիւն երկրորդ.** Դիսցիպլինայի հին ծեր, որ կաշկանդում էր զպրոցի ամբողջ կեանքը, մանկական անձնաւորութեան ազատ

զարգացումը, աշխատանքի դպրոցում չի կարող տեղ ունենալ։ Բայց աշխատանքային պրոցեսսներն իրանք երեխաների մէջ դաստիարակելու են այն ներքին դիսցիպլինան, առանց որի բանական կերպով կազմակերպւած կոլլեգաֆվ աշխատանք երեւակայել չի կարելի։ Երեխաները կենդանի մասնակցութիւն ունին դպրոցական կեանքի բոլոր աշխատանքային պրոցեսսներում, որտեղ աշխատանքի բաժանման սկզբունքից հետեւ ող կազմակերպչական մոմենտները դաստիարակչական տեսակէտից շատ էական գեր պիտի խաղան։ Սովորողներն ընդ սմին կոովորեն զնահատել մարդկային եռանդի աշխատանքային պլանաչափ մսխման եղանակներն և կղաստիարակեն իրանց մէջ պատասխանատութեան զգացում թէ աշխատանքի այն մասի վերաբերմանը, որ բաժին է ընկնում բանւորական կոլլեգաֆից իւրաքանչիւրին և թէ այն յաջողութեան նկատմամբ, որ ունենում է բոլոր աշխատանքն ամբողջովին։ Կարծ ասած կոլլեգաֆվ արտադրական աշխատանքն և դպրոցական կեանքի ամբողջ կազմակերպութիւնը պէտք է ապագայ սոցիալիստական հանրապետութեան համար քաղաքացիներ դաստիարակեն։

**Յօդւած տասներրորդ.** Աշխատանքային դպրոցում ուսուցյումը զորդ աստիճանների վրայ հանրակրթական պոլիտեխնիկական ընովթ ունի, և ընդ սմին ֆիզիկական և էսթետիկական կրթութեան կարևոր տեղ է յատկացն ուում։

**Մանօթութիւն առաջին.** Ինստրուկցիաներն, օրինակելի ծրագրները և բացատրական նկատողութիւններն առանձին պիտի հրատարակեն։

Ծանօթութիւն երկրորդ. Թէ տռաջին  
և թէ երկրորդ աստիճանի գոլրոցական ծրագիրն  
տռանձնապէս ճինութիւն պէտք է ունենայ տե-  
ղական պայմաններին յարմարելու համար: Բացի  
այդ՝ սովորողների առանձին խմբերի համար հնարա-  
ւոր է համարում ծրազրի մէջ այս կամ այն ա-  
ռանձին առանձին առարկան մայնել՝ դասընթա-  
ցի ամրողութիւնն ի նկատ առնելու պայմանով:

### III. Դպրոցական աշխատանքի կարգն ու պայմանները

Յօդւած տասնեւսորսերորդ. Դպրոցական  
աշխատանքներն ուսման տարւայ ընթացքում երեք  
շրջանի են բաժանւում. 1) Սովորական գոլրոցական  
դրադունքներ՝ մօտաւորապէս սեպտեմբերի 1-ից մին-  
չե յունիսի 1-ը, 2) Դպրոցական գրադառունքներ բաց  
երինքի տակ, մօտաւորապէս յունիսի 1-ից մինչե  
յուլիսի 1-ը. հրապարակներ, ամսալին զաղութներ,  
էկսկուրսիաներ երեխաններին բնութեանը և կեանքին  
ժանօթացնելու համար, 3) Լիակատար արծակուրդ,  
մօտաւորապէս յուլիսի 1-ից մինչե սեպտեմբերի 1-ը:  
Դէկտեմբերի 23-ից մինչե յունւարի 7-ը և ապրիլի  
1-ից մինչե 14-ը գոլրոցում տօնուում են Բանւո-  
րա-Գիւղացիական Կառավարութեան սահմանած տօ-  
ները:

Ծանօթութիւն. Ժողով՝ կրթ. Նահան-  
դակին Բաժանմունքներին իրաւունք է արւում թէ  
կրնատելու լիակատար արծակուրդի ժամանակա-  
միջոցը, և թէ փոփոխելու աշխատանքների դասա-  
ւորութիւնն ամրող տարւայ համար:

Յօդւած տասնեւսորսերորդ. Դպրոցը բաց  
է սովորողների համար շարաթեւոյ հօթ օրւակ բն-  
թացըում:

Ծանօթութիւն առաջին. Ուսման օ-  
րերի ամրող թւից շարթական երկու օր, սակայն  
ոչ յաջորդաբար, պէտք է առանձնացնի են: Օրերից  
մէկը միանդամայն ազատ պէտք է լինի սովորական  
դրագմունքներից, և պէտք է օգտագործեի ընթեր-  
ցումի, էքսկուրսիաի, ներկայացման և երեխանների  
ուրիշ ինքնուրացն գրադառունքների համար. այդ  
նապատակների համար նոր մանկավարժական ուժեր  
են հրատիրւում: Միւս օրը կիաայսատանքային  
օր է սովորական մանկավարժական կազմով և  
օգտագործուում է ակնքային և լորորատարտիան  
դրազմունքների, ունիթերատունների, էքսկուրսիանների  
և աշակերտական ժողովների համար:

Ծանօթութիւն երկրորդ. Իւրաքան-  
չեւը գոլրոցական աշխատանքը շարթւայ ընթաց-  
քում մի աղատ օր ունի:

Յօդւած տասնեւսորսերորդ. Ենչ ճրա-  
գրավին գոլրոցական դրագմունքներ էլ լինենք դրանք  
առաջին աստիճանի վրայ առաջին երեք տարւայ  
ընթացքում աւել չպէտք է լինեն 4 ժամից, միւս  
տարինների ընթացքում՝ 5 ժամից, իսկ երկրորդ տա-  
տինանի վրայ՝ 6 ժամից:

Յօդւած տասնեւսորսերորդ. Պարտավիր  
տնապին, դասեր և աշխատանքներ - տուլը թոյլ չի  
արւում:

Յօդւած տասնեւսորսերորդ. Դպրոցում ոչ  
մի պատիժ թոյլ չի արւում:

Յօդւած առանիններորդ. Բոլոր թնհութիւնները՝ բնդունելութեան, փոխադրութեան և աւարտաման—վերացւում են:

Յօդւած քսան երորդ. Դասարանական զբազմունքներն ըստ կարելւոյն փոխարինւում են խմբականով համապատասխան աշխատանքի համար սովորողի պատրաստիւթեան աստիճանի համաձայն:

Մանօթութիւն. Տարիքին չհամապատասխանող բարձր խումբ փոխադրւելլ թոյլ է տրւում միայն դպրոցական բժշկի եզրակացութիւնը լսելուց յետոյ:

Յօդւած քսան մէկերորդ. Բոլոր տիպերի բոլոր դպրոցները մտցրւում են պարտադիր տաքնախանչիններ՝ համապատասխան տարիքի երեխաներին հասնող առողջապահիկ բաժինների չափով:

Յօդւած քսան և երկրորդ. Թէ առաջին և թէ՛ երկրորդ աստիճանի բոլոր դպրոցները պէտք է բժիշկների կանոնաւոր հսկողութեան աակ գրանւեն:

Յօդւած քսան և երրորդ. Երեխային դպրոց ընդունելուց անհրաժեշտ է բժշկական մանրազնին ըննութիւն՝ նրա Փիզիկական և հոգեկան առողջութիւնը որոշելու համար:

Յօդւած քսան և որրորդ. Ազատ աեղերի (վականսիալի) պահասութեան դէպքում Միասնական Դպրոցում սովորողների տեղաւորման կարգը Ժողովրդական կրթութեան համապատասխան Բաժանմունքն է սահմանում:

Յօդւած քսան և հինգերորդ. Կւրաքանչյւր դպրոցի պէտք է դպրոցական շէնքերից ազատ հողամաս յատկացնելի՝ գիւղօրայքում ոչ-պակաս մի դեսեատինից, իսկ քաղաքում հնար եղածին չափ, սակայն ոչ-պակաս 500 քառ. սաժեննից:

Մանօթութիւն. Նոր բացւող դպրոցներին յատկացրւելիք հողամասը պէտք մօտենալ գիւղական հողամասերի նորմալին:

IV. Միասնական Աշխատանքային Դպրոցի ինքնավարութեան հիմնական սկզբունքները

Յօդւած քսան և վեցերորդ. Դպրոցական կոլեկտիվը (համալները) բաղկանում է դպրոցի բոլոր սովորողներից և բոլոր դպրոցական աշխատաւորներից:

Յօդւած քսան և եօթերորդ. Դպրոցական ինքնավորութեան պատասխանատու օրդանը Դպրոցական Խորհուրդն է, որ բաղկանում է ա) բոլոր դպրոցական աշխատաւորներից, բ) դպրոցական ուայնի աշխատաւոր բնակչութեան ներկայացուցիչներից, որոնց քանակը դպրոցական աշխատաւորների  $\frac{1}{4}$ -ն են կազմում. գ) նոյն յարաբերութեամբ՝ նաև 12 տարեկանից սկսած բարձր դասարաններում սովորողների ներկայացուցիչներից. դ) Ժողովրդական կրթութեան Բաժանմունքի մի ներկայացուցչից:

Յօդւած քսան և ութերորդ. Դպրոցական կոլեկտիվի ներքէն կեանքի կարգաւորողը՝ Ժողովր-

գական Լուսաւորութեան Կևառանական, տեղական օրդանների, Դպրոցական Խորհրդի որոշումների շրջանակներում՝ Դպրոցական Կոլլեկտիվի ընդհանուր և խմբական ժողովներն են:

Յօդւած քառնեիններորդ. Դպրոցական Խորհրդի գործադիր մարմինը՝ Պրեզիդիումն (նախագահութիւնն) է, որ մայնում է՝ Դպրոցական Խորհրդի և Դպրոցական Կոլլեկտիվի կազմակերպած Դպրոցական Կոմիսարների (Յանձնաժողովների) աշխատանքը:

Յօդւած Երեսներորդ. Դպրոցական կեանը բոլոր խնդիրների վերաբերմանը՝ Դպրոցական Խորհրդի ընդունած որոշումները չպէտք է խախտէն Միասնական Դպրոցի ընդհանուր սկզբունքներն ու ժողովրդական Կրթութեան Բաժանմունքի որոշումները և կարող են բոլորի նիւթ՝ դառնալ Բաժանմունքի ներկայացուցչի համար:

Յանօթութիւն. Բոլորը չի խանգարում Խորհրդի որոշման ընթացքը, սահայն խնդիրը մայցրում է ժողովրդական Կրթութեան Բաժանմունքն ի քննութիւն:

Յօդւած Երեսունեմեկերորդ. Դպրոցական Խորհուրդն իրաւասու է քննել և վճռել հեանեալ խնդիրները.

ա) առվորողների դասաւորութիւնն ըստ խմբերի և նրանց աւարտման հարցը.

բ) առաջադրութիւնն ժողովրդական Կրթութեան Բաժանմունքին սովորողներին դպրոցական զբաղմունքներից աղատելու մասին.

գ) ժողովրդական Լուսաւորութեան ժողովրդական Կոմիսարիատի և ժողովրդական Կրթութեան Բաժանմունքի գիրեկտիվների սահմաններում՝ դպրոցական խմբերի զբաղմանց պլանների և ծրագիրների հաստատումն.

դ) դպրոցի կրթական, արտադրական և անտեսական աշխատանքների պլանի և կարգի հաստատումն.

ե) դպրոցական Կոլլեկտիվի մանկավարժական և վարչական-անտեսական ծախքերի, տարեկան ծախքերի և հաշիների կազմելը.

է) դպրոցական Կոմմունայի կեանքի ներքին կառուցւածքն վերաբերող դպրոցական ինստրուկցիայի նախագծի ըննութիւնն ու հաստատումն:

Յօդւած Երեսունեմեկերորդ. Դպրոցական Կոմմունայի ներքին կեանքը հիմնեում է լիակատար աղատութեան սկզբունքով: Կրթական և դաստիարակչական նպատակներ հեաապնդող խմբերն ու շրջաններն աղատ անդամակցութեամբ միանում են Դպրոցական Կոլլեկտիվի մէջ, օրինակ՝ դասատուների միութիւն, երիտասարդների միութիւն և այլն:

V. Դպրոցների վերականցումնան ծրագրի կենսագործութեան միջոցները

Մատնանշած ծրագրի կենսագործութեան համար և նթագրում է եռդասեան և չորեկդասեան նախակրթութական դպրոցները (հաշալինութեան աշխատանքները)

առաջին աստիճանի հինգամեավ դպրոցների վերածել. այդ նպատակով ուսման տարւայ սկզբից բոլոր նախակրթական դպրոցներին պէտք է ուսուցման լրացուցիչ տարի աւելացնել: Աւագ հասակաւորների լրացուցիչ խումբն ընդունւում են այն երեխաները, որոնք—այս տարի աւարտել են նախակրթական դպրոցները: Հինգամեավ դասրնթաց ունեցող այսպէս կուած երկրդասեայ դպրոցներն իրենց ամբողջ կազմով առաջին աստիճանի դպրոցների շարքն են դասւում:

Բոլոր միջնակարդ դպրոցները, այլև այս դրաբ-  
րոցները, որ դրանց տիպին են մօտենում, լինեն  
նրանք պետական, հասարակական թէ մասնաւոր,  
բաժանուում են արական գիմնազիաների բաժանման  
օրինակով: առաջին երեք զուղղնթաց դասարանները  
նախապատրաստականներով հանդերձ առաջին աստի-  
ճանի ինքնուրոյն դպրոց են դառնում և վերակազմ-  
ուում այդ աստիճանի դպրոցներին մատնանշւած ընդ-  
հանուր հիմքերով: Ներկայ տարու մ դրանց աւելանում  
է ուսուցման առաջին և եթէ հարկ լինի, նաև երկ-  
րորդ տարին (մինչ 5 ամեավ կազմի լրանալը):

4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանները կազ-  
մում են երկրորդ կարգի դպրոց: 8-րդ դասարանը  
վերանում է:

Բարձր նախակրթական դպրոցները և այն  
դպրոցները, որոնց տիպը մօտենում է դրանց  
—օր. առեւտրական (торговыie) դպրոցները, —  
վերակազմուում են որպէս երերորդ աստիճանի

դպրոցներ. այդ նպատակով այդ դպրոցներից հեռաց-  
նուում է ուսուցման առաջին տարին, և յաւելուում է  
աւագ հասակաւորների խումբը նրանց համար, որ  
այս տարի են աւարտել այդ դպրոցները:

Նախակին, նախակրթական և միջնակարդ դպրոց-  
ների վերակազմութեան ներկայ ծրագիրն օրինա-  
կելի է համարւում և կարող է փոփոխութեան են-  
թարկել Փողովրդական Կրթութեան համապատաս-  
խան Բաժանմունքների որոշմամբ:

Գ. Կ. Գ. Կ. Նախագահ՝ Ե. Սվերդլով  
Լուսաւոր. Ժող. Կոմ. Փոխանորդ՝ Մ. Պոկրովսկի  
Գ. Կ. Գ. Կ. Քարտուղար՝ Ա. Ենուկին:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՍԿԶԲՈՒԽՆՔՆԵՐԸ

(Լուսաւորութեան Պետական Կոմիսարի կողմից)

Սկսում է ուսմոն նոր տարին: Դպրոցական  
կեանքի փոքր ինչ նորմալ պայմաններում, որպէս  
արձագանգ Հոկտեմբերեան մեծ յեղափոխութեան,  
նրանում արմատական և պտղաւէտ ռեֆորմ պէտք էր  
սպասել, ռեֆորմ, որ իր համապարփակ ծաւալով  
ուսու դպրոցին, գէթ սրա հիմնական սկզբունքների  
տեսակետից, առաջին տեղը պիտի տար քաղաքակիրթ  
աշխարհում:

Բայց ի հարկէ, նոյնիսկ այդ միանգամայն նոր-  
մալ պայմաններում, դպրոցը չի կարող վերածնել  
իսկոյն և եթ, և առաջին շրջանում իրականութիւնը

պէտք էր քիչ թէ շատ նկատելի կերպով լեռ մնար  
նախազծած ծրագիրներից:

Ոյժմ մենք իրաւունք ունինք միայն մասնակի  
ռեֆորմների վրայ յոյս դնելու, որովհետև մենք ո՛չ  
միայն արդելքի կհանդիպենք քանակի և կահաւորու-  
թեան տեսակէտից բաւարար դպրոց չունենալու և  
ուսուցիչների անպատճառակի լինելու հետեւանքով, այլև  
մշակւած ծրագիր չունենալու պատճառով շնորհիւ  
սարուտաժի, կենարոնական վարչութեան և ամբողջ  
դպրոցական ապարատի վկուզումի, որից մենք մի-  
այն վերջին ժամանակներս ենք դուրս գալ սկսում:

Ուսուցչութեան մի մասի վերաբերմունքը դէպի  
Կոմիսսարիատը, չնայած վերջինիս պարաստականու-  
թեան մասին եղած ապացոյցների՝ տրամադրելու իր  
բոլոր ուժերը մեր բազմաչարչար դպրոցն իսկական  
ժողովրդական դպրոց դարձնելու դործին, քաղաքա-  
կան նկատառութերով շարունակում է թշնամական  
լինել: Սյս հանգամանքը, ի հարկէ, մեծապէս վնա-  
սում է դպրոցական բարդ և նուրբ ռեֆորմին, որ-  
տեղ այնքան անհրաժեշտ կարող էր լինել դպրոցա-  
կան բոլոր տարրերի անկեղծ և եռանդուն մասնակ-  
ցութիւնը:

Բայց, եթէ դպրոցի իրական ռեֆորմն անհրա-  
ժեշտաբար մասնակի բնոյթ է կրելու, մի հան-  
գամանք, որ չի արգելում նրան, ինչպէս հրատարակ-  
ւած դէկրեաներն են ցոյց տալիս, մինչայժմ եղած  
բոլոր ռեֆորմներից ամենաարմատականը լինելու,  
Կոմիսսարիատն աւելի ևս անհրաժեշտ է համարում

որոշելու այն նպատակները, որոնց նա ծգտում է,  
և իրագործման սպասող առանձին ռեֆորմների շար-  
քը թւելով, անմիջապէս նկարելու այն դպրոցի պատ-  
կերը, որին մենք ծգտում ենք և որը միայն  
կարող ենք մենք նորմալը համարել վերանորոգւած  
Ռուսաստանում:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ, ակնե-  
րե է, որ դպրոցական ռեֆորմը գիտութեան,  
կրթութեան ծգտող մասսաների վարած պայ-  
քարի կնիքն է կրելու: Լուսաւորութեան Կոմիսսա-  
րիատը պարտաւոր է վշրել դասակարգային արտօ-  
նութիւնները նաև այս, թերեւս ամենակարեւոր, բնա-  
գաւառում: Ընդ սմին խնդիրը եղած դպրոցը հանրա-  
մատչելի դարձնելուն չի վերաբերում, որովհետև աշ-  
խատաւոր մասսաներին հարկաւոր չէ դպրոցն այն  
վիճակով, որին նրան նախընթաց ռեժիմն է հասցրել.  
Խնդիրը ժողովրդական դպրոցի ոգով ծեռնար-  
կած արմատական վերակազմութեանն է վերա-  
բերում:

Նախկին դպրոցում նրա ստորին տեսակները ծայր  
աստիճանի աչքաթող էին արւում կամ աչքի էին բնկնում  
արհեստական ճանապարհով վերագրւած վնասակար  
գծերով, քանի որ այդ դպրոցները «հասարակ ժողո-  
վրդի» համար էին: Նրանց վերաբերմանը պարզ ան-  
բարեացակամութիւն չէր ցուցադրուում, այլ ուղղակի ան-  
բարեացակամութիւն և, վերջապէս, ծգտումն որքան  
հնար է ժողովրդական դիտակցութիւնը թունաւոր-  
ման գործիք դարձնելու նրանց, հաւատարիս հպա-

տակութեան զդւելի գործիք: Բարձր աստիճանների վրայ դպրոցը բարձր գասակարգելի գպրոց չէ միայն, ինչպ. օրինակ Անդրիայում, նա միաժամանակ նաև գպրոց-վարժարան է, որ խոնարհ ստրուկների համար ոչ-պահան հաւատարիմ եւ հպատակ վերահսկիչներ է գաստիարակում:

Նոր գպրոցը ոչ միայն ծրի է լինելու բոլոր աստիճանների վրայ, ոչ միայն հանրամատչելի և, ըստ կարելոյն մօտիկ ապագայում, պարտադիր է լինելու, որպէս զի նա հաստատ հիմքերի վերայ ամրանալ կարողանայ. նա պէտք է նաև միասնական և աշխատանքային լինի:

Ի՞նչ է նշանակում, թէ գպրոցը պէտք է միասնական լինի: Այդ նշանակում է, թէ նորմալ գպրոցների ամրող սիստեմը՝ մանկապարտէղեց մինչև համալսարան՝ գառնում է մի գպրոց, մի անընդմիջական սանդուղը: Այդ նշանակում է, թէ բոլոր մանուկները պէտք է մտնեն մի և նոյն տիպի գպրոց և միակերպ սկսեն իրանց կրթութիւնը, որ նրանք բոլորն իրաւունք ունին սանդուղքով գնալու մինչև նրա ամենաբարձր աստիճանները:

Գուցէ պետութիւնն ուղղակի ֆիզիկական կարողութիւն չունենայ յաղթահարելու այդ նպատակը՝ որպէս զի բոլոր ուսու երեխաներին այժմ իսկ երւշխիք տայ ապագայում համալսարան մտնելու համար, բայց յամենայն դէպս գպրոցի մի աստիճանից միւսին անցնելը պէտք է ապահովւած լինի ամենից առաջ ամենից տաղանդաւորներին, ընդումին առաւելու-

թիւն է տրւում պրոլետարների և աղքատ զիւ զացիների երեխաներին:

Սակայն միասնական գպրոց ասելով անպատճառ միատիպ գպրոց չի հասկացւում:

Կենտրոնական Կոմիսարիատը սահմանելով մի քանի պայմաններ, որոնց իրազործումը բացարձակօրէն պարտադիր է համարւում, միաժամանակ ինքնագործութեան ընդարձակ ասպարէկ կատայ Խորհրդներին կից կազմակերպւած Ժողովրդական կրթութեան Բաժանմունքներին, որ իրանց հերթին, ի հարկէ չեն ննշելու մանկավարժական խորհրդների գաստիարակիչ ստեղծագործութիւնն այնաեղ, որտեղ դա զպրոցի գեմուրատացման գէմ մզւող պալքարի գծով չի գնայ:

Մասնաւոր նախաձեռնութեանն ևս բաւականացի ընդարձակ ասպարէկ կյատկացըւի:

Բոլոր խմբաւորումների համար մինիմալ ծրագրը Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարն է սահմանում:

Բայց, մի կողմ թողնելով այն, որ մի քանի ուղիներով որոնումներ անելը ուսւ գպրոցի առջև այդպիսով փակւած չի լինելու, գպրոցն ինքը բոլոր աստիճանների վրայ չի կարող հորիզոնական գծով միասնական լինել, ինչպէս նա միասնական է լինելու ուղղահայեաց գծով:

Պետութիւնը մասնագէաների կարիք ունի: Արբունքի հասած երեխաներն իրանք ակներև տարբերւող հակումներ և շնորհներ ունին: Մանկավար-

ժութիւնը՝ որպէս ալդպիսին՝ կողմնակից է գիտելիք-ների շրջանը հետզինետէ սեղմելուն, ուշադրութիւնը յատկապէս ընտրած առարկաների վրայ սեեռելուն, որովհետև կրթւած մարդու իդէալից հաւասարապէս հեռու է և այն մասնագէար, որին իր մասնագիտութիւնից դուրս խորթ է բոլոր մարդկայինը, և այն ծանծաղամիտը, որ փոքր ի շատէ գիտէ ամեն ինչ և ոչինչ՝ մինչև վերջը:

Ուստի և որոշ հասակից՝ 14 տարեկանից սկսած դպրոցը թուլ է արւում մի քանի ուղիների կամ խմբաւորումների բաժանել, միայն այնպէս, որ մի շաբթ հիմնական առարկաներ շարունակում են միացնել բոլոր աշակերտաներին, և դասաւանդումն իւրաքանչիւր առանձին խմբաւորման մէջ այդ բաժանումից յետոյ միայն աւելի պայմանութէն է ներկւում այս կամ այն առանձնայատուկ գոյնով: Այդ խմբաւորումները ոչ մի դէպքում ինքնամփոփ բնոյթ (замкнутый характер) չպէտք է կրեն:

Բացի այդ՝ նոր դպրոցը, ինչպէս այդ մատնանշւած է ոտորեւ, զգապապէս փոխում է իր դիմագծերը նախած տեղական պայմաններին, այլու չփոխելով բնաւ իր ընդհանուր ողին:

Նոր դպրոցը պէտք է աշխատանք այսին լինի: Խորհրդավին պետութեան դպրոցի համար, որ կապիտալիստական ռեժիմի տոյիալիստականի փոխանցման պրոցեսոն է վերապրում, դա աւելի կարեւը է, քան կապիտալիստական առաջաւոր երկրների դպրոցների համար, և չնայած վրան, այդ երկրնե-

բուժ իսկ այդ անհրաժեշտութիւնը գիտակցւած է և մի որոշ չափով՝ իրադորձւած:

Աշխատանքի մուծման պահանջը, որպէս դասաւանդութեան հիմքը, սկիզբ է առնում երկու բոլորովին տարրեր հիմքերից:

Առաջին հիմքը հոգեբանութիւնն է, որ ուսուցանում է; թէ (զգացողութիւնների) իսկական իւրացումը (восприятие) միայն գործօն իւրացումն է: Մանուկը ծարաւի է շարժման, նրան պահել են անշարժութեան մէջ: Նա չտիտաղանց զիւրին կերպով իւրացնում է գիտելիքները, երբ զրանք հազորդւում են նրան խաղի կամ աշխատանքի ուրախ, գործօն եղանակով. խաղը և աշխատանքը հմուտ վերաբերմունքի պայմանով զուգորդում են միմեանց՝ մինչդեռ մանկանը սովորեցնում են լողութեամբ և զրբի վրայ: Մանուկը միշտ հպարտանում է իւրաքանչիւր գործնական իւրացումով (приобретение), իսկ նրան միշտ հեռու են պահել վրանից:

Այս տեսակեաից աշխատանքային սկզբունքը վերածում է գործօն, շարժուն, ստեղծագործական աշխարհաճանաչութեան: Ֆրեցէլի հասկացողութեամբ մանկապարտէղը աշխատանքային սկզբունքի առաջին սիստեմատիկ կիրառումն է, և մենք պէտք է այդ սկզբունքին դասաւանդութեան համապատասխանող դասաւանդութեան պահանջ գնենք նաև դպրոցական լածորդ ապահնանների վրայ, ի հարկէ, համակերպւելով բարձր տարիներին և զիակելիքների համեմատաբար աւելի լայն լրջանին:

Ժամանակակից առաջաւոր դպրոցի դէպի աշխատանքն ունեցած ծղտման մի ուրիշ ազբիւրն անմիջական ցանկութիւնն է՝ ժամօթացնելու աշակերտներին այն բանին, ինչ ամենից շատ է հարկաւորւելու նրանց կեանքում, այն բանին, ինչ ներկայումս տիրական դեր է խաղում կեանքում՝ երկրագործական և արդիւնաբերական աշխատանքին, այդ աշխատանքի բոլոր բազմատեսականութիւններով։

Պէտքէ ի նկատի ունենալ սակայն, որ եթէ մենք հակառակ չենք բարձր տարիքաւորների տեխնիկական մասնագիտական կրթութեամբ, մենք եռանգուն կերպով բողոքում ենք աշխատանքային կրթութեան շրջանի իւրաքանչիւր մասնաւոր սեղմումի դէմ, երբ այդ տեղի ունի միամական դպրոցի սարքին աստիճանների վրայ, այսինքն առնւազը մինչ 14 տարեկանը։

Առաջին աստիճանի վրայ դասաւանդութիւնը հիմնում է քիչ թէ շատ արհեստաւորական բնոյթ ունեցող պլրոցեսսների վրայ՝ համաձայն երեխաների թոյլ ուժերի և նրանց այդ տարիքի համար բնական հակումների։ Երկրորդ աստիճանի վրայ առաջին տեղը յատկացւում է արդիւնաբերական և երկրագործական աշխատանքին՝ սրա ժամանակակից մեջենապական ձևերով։ Բայց բնորդապէս աշխատանքային դպրոցի նպատակն այս կամ այն արհեստին վարժեցնելը (дрессировка) չէ, այլ պոլիտեխնիկական կրթութիւնը, որ երեխաներին գործնապէս ժամօթացնում է աշխատանքի բոլոր կարեւորագոյն ձևերի մե-

թողներին, մասամբ ուսումնաբանական արհեստանոցում կամ դպրոցական ֆերմայում, մասամբ ֆաբրիկում, գործարանում և այլն։

Այսպիսով, մի կողմից մանուկը պէտք է ընտելանայ բոլոր իրերին, զբոսնելով, ժողովածուներ կազմելով, նկարելով, լուսանկարելով, կաղապարելով, ժեփելով, կարգունէ իրեր սօսնելով, բոլուր և կինդանիներ դիտելով, նրանց բուսցնելով ու նրանց մասին հոգ տանելով։ Լեզու, մաթեմաթիկա, սպատմութիւն, աշխարհազրութիւն, ֆիզիկա և քիմիա, բուսաբանութիւն և կենդանաբանութիւն, դասաւանդութեան բոլոր այս առարկաները ո՛չ միայն հնարաւորութիւն են տալիս ուսուցման ստեղծագործական մեթոդին, այլև պահանջում են այդ։

Միւս կողմից, իդէալին մօտենալով, դպրոցը պէտք է սովորեցնի աշակերտաներին աշխատանքի գրլիսաւոր վարժութիւնները հետեւեալ բնագաւառներում՝ ատաղձագործութիւն և հիւսնութիւն, փայտիքանդակումն, մետաղի կաղապարումն, կռումն, ծուլումն և խառատումն, մետաղների հալեն ու միացնելը, շրդեղելը, գալիիկոնելը, կաշւեգործութիւն, տպագրութիւն և այլն։ Գիւղում, հասկանալի է, գիւղատնականութեան այնքան բազմատեսակ գործնէ, որի շուրջը կենտրոնանում է ամբողջ դասաւանդութիւնը։

Կարելի է չափսոսալ աշխատանքի վրայ առատօքէն գործադրւած ժամերը։ Դրան շարթական տասը ժամ յատկացնելով՝ ամերիկացիները միաժամանակ

համոզւել են, որ երեխաները ոչ միայն յետ չեն մնացել ուրիշ առարկաներից, այլև օդուտ են քաղել. այնպէս որ, ամերիկական մանկավարժների վկայութեամբ, ուրիշ առարկաներից զատ, աշխատանքի ներմուծումը ժամանակ է տնտեսում:

Միւս կողմից աշխատանքի ներմուծումը բարերար ներդործութիւն է ունենում աշակերտների հոգեկան զարգացման վրայ, ուժգնօրէն նրանց ուշադրութիւնն է զարգացնում, ճշտապահութիւնը, հնարադիտութիւնը և այլն. ձեռքերի աեխնիկական վարժեցումը ինքնաբերաբար զարգացնում է զլիի ուղեղի մի բանի կարեռագոյն կենտրոնները:

Պոլիտեխնիկորէն զարգացած 14 տարեկան երեխան, հասկանալի է, որ հնարաւորութիւն կունենայ մեծ արագութեամբ իւրացնելու իր ցանկացած մասնագիտութիւնը:

Տեսնենք թէ նիւթի իւրացման տեսակէտից ինչպէս է առաջ գնում զասաւանդութիւնն այն զարգում, որտեղ աշխատանքը գերակշռող դեր է խաղում:

Դասաւանդութեան առանձին առարկաների մէջ եղած սահմանները, ի հարիե, միանդամայն ի մի են ծուլում տարրական դպրոցում, որպիսին մանկապարտէզն է ուսման վերջին տարիներում: Այստեղ գրեթէ բոլոր զբաղմունքները մի մեծ, չզատած առարկալի են վերածում՝ մանկան աշխատանքային ծանօթութեանը նրան շրջապատող բնութեանը և հասարակական միջավայրին:

Խաղը, զբօսանքը, զբոյցը երեխաների գործովութեան մէջ նիւթ են տալիս կոլեկտիվ և անհատական մտածողութեան: Մանուկից և նրան շրջապատող բնութիւնից սկսած՝ ամեն ինչ հարցի և պատասխանի, պատմւածքների, շարադրութիւնների, պատկերացումների և նմանողութիւնների նիւթ է ծառայում: Առանց բոնութիւն գործդնելու ուսուցիչն այնպէս է կարգաւորում և ուղղութիւն տալիս մանկան հարցասիրութեանը, նրա շարժելու ծարաւին, որպէս զի ամենամեծ արդիւնքն ստացւի: Այս բոլորն էլ հէնց դասաւանդութեան հիմնական առարկան է, մի տեսակ մանկական հանրագիտութիւն (детская энциклопедия):

Դասաւանդութեան աւելի բարձր աստիճանի վրայ, ակներե է, զբանով չեն բաւականանում: Դիտութեան որոշ ցիկլ իւրացնելու վրա գործ գրւած սիստեմատիկ աշխատանքը զիսաւոր տեղն է զրաւում: Բայց առանձին գիտութիւնների այս դասաւանդութիւնը ո՛չ մի դէպրում չպէտք է տեղահան անի հանրագիտարանը, որ այստեղ ևս շարունակում է մեծ գեր խաղալ, բայց փոքր ինչ այլ բնաւորութիւն է ստանում այժմ, ընդունելով նա բնութեան առընթերութեամբ մարդկացին կուլտուրայի ուսումնամիրութեան բնոյթ:

Հանրագիտութեան դասաւանդութիւնը, որի համակենարուններն աշխատանքի պրոցեսսներն են կազմում, առաջին աստիճանի վրայ (8-ից մինչև 13 տարեկանը) պէտք է երկու շրջանի կամ համակենարունի

բաժանուի, որ տարբերուում են իրանց նիւթի դասաւորութեամբ և դասաւանդութեան մեթողով։ Առաջին շրջանում դասաւանդութիւնն առաջ է տարւում նիւթերի կանխապէս ընտրւած սերիաների հիման վրայ։ Ուստի համար աշակերտներին առաջարկուում է արտադրութեան այս կամ այն արդիւնքը կամ կուլտուրայի տարրը, որ ինչպէս բնութիւնից տրւած նիւթ և կամ մշակոյթի առարկայ բազմակողմանի դիտողութեան է ենթարկուում։

Միաժամանակ համառօտ տեղեկութիւններ են ստացւում դրա Փիդիքական և քիմիական յատկութիւնների, նրա ժագման և զարգացման մասին։ Ապա նկարագրուում են բոլոր առնչակից տւեալներն աշխատանքի պատմութիւնից (մշակման եղանակներն անցեալում) և, վերջապէս, տւեալ առարկայի արտադրութեան ժամանակակից արդիւնաբերութեան պրիունները։ Ինքնլսափնքնեան հասկանալի է, որ պարզ պատմածքն ամենից վերջին տեղը պիտի գրաւի, իսկ առաջին տեղը պէտք է արւի գործոն իւրացմանը. ուստի և առարկաների ընտրութիւնն առաջ տանել էկակուրսիաների, և առնչակից աշխատանքային ակտերի մեծամասնութեան կենդանի դիտողութեան և ինքնուրոյն վերաբարդութեան միջոցով։

Երեխաններն իրանք ևս կարող են գտնել իրանց համար և ուսուցչի ու աւագ ընկերների օգնութեամբ ուսումնասիրութեան ենթարկել իրանց հետաքրքրող որևէ առարկայ, բայց այդ ազատ սրազմունքները չպէտք է խանդարեն անցնել ծրագրած դասընթացը

առարկաների գիդակտիկական տեսակէտից կատարելագոյն ընտրութեամբ, այնպէս որ ի վերջոյ ամբողջացած, թէկուզ և կրծատ ծանօթութիւն արւի անցեալի կարեռադոյն մոմենտների մասին և դրան առընթեր՝ մի շարք տւեալներ բնական դիտութիւններից։

Երկրորդ անգամը մօտաւորապէս նոյն գիտելիքների փոքր ինչ աւելի ընդլայնւած ցիկլն է անցնուում պատմական կարգով. այսինքն կենդանի շարահիւսութեամբ և Ֆիշ ինքնուրոյն աշխատանքի միջոցով երեխանները ծանօթանում են աշխատանքի պատմութեանը և այդ հիմքերի վրայ՝ ամբողջ հասարակութեան պատմութեանը։ Աշխատանքային հնարաւոթիւնների աճման հիմքի վրա ամբողջ կուլտուրայի էվոլյուցիան ո՛չ միայն նրանց միտքը, այլ և մարմինը, ամենից առաջ ձեռները պիտի պարբերաբար և ըստ կարելոյն լիովին մուտք գործեն վայրի, վաշկատուն, նախնական — երկրագործական, բարբարոս կենցաղ (մեծ գետային թագաւորութիւնների, անտիկ, միջնադարեան և այլն շրջանները)։

Այս առարկայի այսինքն կուլտուրայի հանրագիտութեան դասաւանդութիւնը կարող է դիտութեամբ ոչ-ցանկալի, մակերեսական բնոյթ ստանալ, եթէ ձեռքի տակ բաւականաչափ պատրաստի դասատուներ չկան։ Այս առարկայի և իր մեթոդիկայի ուսումնասիրութիւնը Մանկավարժական հնատիտուտներում պէտք է անմիջապէս ներմուծւի, իսկ դպրոցա-

կան հիմնարկութիւններում կներմուծւի հետզհետե,  
երբ պատրաստի դասաւուներ լինեն:

Նոյն առարկան, վերածւելով աշխատանքի էվո-  
լյուցիայի և նրա ստեղծած տնտեսական ձևերի վրայ  
հիմնւած սոցիոլոգիայի դասընթացի, տեխնիկապէս  
անհամեմատ աւելի ճշգրիտ և խոր, մի խօսքով, գի-  
տական-տեխնիկական ուսումնասիրութեան ենթար-  
կելով աշխատանքային կատարելագործւած տեխնիկա-  
կան (մԵրենայական) պրիուները և բաւականաչափ  
բազմակողմանի վիճակադրական և իրաւական քննու-  
թեան առնելով ժամանակակից հասարակութիւնը և  
իր բնեուները (աշխատանք և կապիտալ, սոցիալիզմ  
և կապիտալիզմ), աշխատանքային հանրագիտութեան  
նիւթ է լինելու երկրորդ աստիճանի դպրոցներում:  
Այդ դպրոցներու մ նոյն առարկան ձուլելու է նաև  
գիտութեան պատմական զարգացման ուսումնասի-  
րութեան հետ, որ սերտօրէն կապւած է տնտե-  
սական կեանքից թէ իր հայեացքների և մեթոդ-  
ների ժագումով, թէ որպէս աղրիւր էկոնոմիկայի  
կրած փոփոխութեանց:

Մրան զուգընթաց միշտ խրախուսւում են նաև  
աշակերտների ազատ զրազմունքները նրանց առանձ-  
նապէս հետաքրքրող մոմենտներով, անձնական ու-  
սումնասիրութիւններ, շարադրութիւններ, ուժե-  
րատներ, մողելներ, ժողովածուներ, և այլն:

Ինչպէս արդէն ասել ենք, որքան աւելի ենք  
բարձրանում դպրոցական սանդուղքով, այս հան-  
րագիտութեան կողքին՝ նոյնքան աւելի են տեղ

դրաւ ում մասնագետների առաջնորդութեամբ սիս-  
տեմատիկաբար ուսումնասիրուղ առարկաները.  
մայրենի լեզուն, մաթեմաթիկան, աշխարհագու-  
թիւնը, պատմութիւնը, կենսաբանութիւնը և իր  
ստորաբաժանումները, Փիզիկան և քիմիան, օտար  
կենդանի լեզուները:

Հասկանալի է, որ այդ զրազմունքները, իրենց  
հերթին, պէտք է ներշնչւած լինեն իւրացման աշ-  
խատանքային մեթոդով: Բայց այդ, ազատ զրազ-  
մունքների համար որոշ ժամեր աշակերտներին պէտք  
է մատչելի լինեն համապատասխան զրազարանները,  
լարորասորիանները, ժողովածուները: Առանձնապէս  
կարեւոր նշանակութիւն ենք տալիս մենք, որ աշխա-  
